# Դպրոցական մրցույթ

**«Թափոնների կանխարգելումը Երևանում. Էկո-երիտասարդությունը կիրառում է հրաժարվի՛ր - վերաօգտագործի՛ր - վերամշակի՛ր սկզբունքները»**

Կրթական-ստեղծագործական թիմերի այս մրցույթը կազմակերպվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» (NEAR-TS/2019/412-943) ծրագրի շրջանակներում՝ Երևանի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ, որի նպատակն է բարձրացնել իրազեկությունը և քաղաքացիների մասնակցությունը թափոնների կանխարգելման և բարելավված կառավարման գործում:

## §1 Մրցույթի ընդհանուր պայմանները և նպատակները

1. «Թափոնների կանխարգելումը Երևանում. Էկո-երիտասարդությունը կիրառում է հրաժարվի՛ր-վերաօգտագործի՛ր-վերամշակի՛ր սկզբունքները» (այսուհետ՝ «Մրցույթ» և «Կանոնադրություն») դպրոցական ուսումնական-ստեղծագործական թիմերի մրցույթի սույն Կանոնադրությունը սահմանում է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») շրջանակներում իրականացվող մրցույթի նպատակները, իրականացման ընթացակարգը և պայմանները:
2. Մրցույթը կազմակերպվում է Ծրագրի կողմից, որը իրականացնում է «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)-ը, գրասենյակի հասցեն՝ ք. Երևան, Կենտրոն թաղամաս, Տերյան 44, 3-րդ հարկ, (այսուհետ՝ «Կազմակերպիչ»)՝ Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության հետ համատեղ:
3. Մրցույթի նպատակն է նպաստել Ծրագրի նպատակների իրականացմանը Երևանի տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտների կրթության և սոցիալական ներգրավվածության բարելավման առումով: Սա մասնավորապես ներառում է.
   - Կենցաղային թափոնների պատշաճ կառավարման կարողությունների զարգացում և այս

# Schools Competition

**“Waste Prevention in Yerevan: Eco-Youth Applies Refuse-Reuse-Recycle Principles”**

This educational-creative teams’ competition is organized under the EU-granted project “Capital Cities Collaborating on Common Challenges in Hazardous Waste Management - Yerevan, Warsaw, Tirana” (NEAR-TS/2019/412-943) in collaboration with the Yerevan Municipality, aimed at raising awareness and enhancing citizens’ participation in waste prevention and improved management.

## §1 General conditions and goals of competition

1. This statute of the educational-creative teams’ competition for schools „Waste Prevention in Yerevan: Eco-Youth Applies Refuse-Reuse-Recycle Principles” (hereafter “the Competition” and “the Statute”), determines the goals, the way of implementation, and terms and conditions of the Competition under the EU-funded project “Capital Cities Collaborating on Common Challenges in Hazardous Waste Management - Yerevan, Warsaw, Tirana” (hereafter as “the Project”).
2. The Competition is organized by the Project implemented by "Investing Projects Implementation Unit Building Up of Yerevan" CNCO, with its registered seat in Yerevan, Kentron district, 44 Teryan str., 3rd floor, referred to as “the Organiser”, in cooperation with the Education Department of Yerevan Municipality.
3. The Competition aims to pursue Project goals in terms of education and social engagement improvement among students of Yerevan primary and secondary schools. This includes in particular:
   - Developing capacity for proper household waste management and increasing awareness of risks

տեսակի թափոնների, այդ թվում՝ կենցաղային վտանգավոր թափոնների հետ կապված ռիսկերի մասին տեղեկացվածության բարձրացում:

- Մարդկանց և շրջակա միջավայրի վրա թափոնների բացասական ազդեցության մասին իրազեկության բարձրացում, երբ դրանք ոչ պատշաճ կերպով են հեռացվում:
- Դպրոցների աշակերտների շրջանում ակտիվ, բնապահպանական վերաբերմունքի խթանում, հատկապես կենցաղային աղբի ճիշտ կառավարման նկատմամբ՝ բարձրացնելով քաղաքացիների բնապահպանական վարքագծի մոտիվացիան:
- Թափոնների կանխարգելման և կառավարման համակարգերի պատշաճ գործունեության և կատարելագործման գործում սոցիալական ներգրավվածության ընդլայնում:
- Թափոնների կրճատման խթանում՝ կենտրոնանալով կենցաղային, այդ թվում՝ կենցաղային վտանգավոր թափոնների վրա:
- Թափոնների տարանջատ հավաքման տեմպերի բարելավում, հատկապես կենցաղային թափոնների պատշաճ հեռացման հետ կապված:
- 3R սկզբունքների (հրաժարվի՛ր, վերաօգտագործի՛ր, վերամշակի՛ր) խթանում, ներառյալ ցածր արտանետումների և էկոլոգիապես պատասխանատու հանգստի և ժամանցի գործունեությունը ընտրելու խթաններ:

associated with this type of waste, including household hazardous waste.

- Increasing awareness and sensitivity towards the negative impact that waste has on humans and the environment when disposed of improperly.
- Enhancing active, pro-environmental attitudes among students of schools, especially towards proper household waste management, enhancing the motivation of citizens' pro-environmental behaviors.
- Enhancing and embracing social engagement in proper functioning and improving waste prevention and management systems.
- Promoting waste reduction focusing on household waste, including household hazardous waste.
- Improving rates of selective waste collection, especially regarding proper household waste disposal.
- Promoting the 3Rs principles (Refuse, Reuse, Recycle), including incentives to choose low-emission and environmentally responsible recreation and leisure activities.

**§2 Մրցույթի առարկան**

1. Մրցույթի ընթացքում կընտրվեն լավագույն ուսումնական-ստեղծագործական աշխատանքները (այսուհետ՝ «Մրցույթի հայտ»): Մրցույթի հայտը պետք է ներկայացնի հետևյալ թեմատիկ հատկանիշներից առնվազն մեկը.

**ա.** Այն պետք է ուշադրություն հրավիրի քաղաքում, վարչական շրջանում կամ թաղամասում կենցաղային թափոններին առնչվող առկա որոշակի խնդրի վրա և ընդգծի դրա հետ կապված ռիսկերը:

**բ.** Այն պետք է լուծման տարբերակ առաջարկի կենցաղային թափոնների հետ կապված որոշակի խնդրի համար կամ առաջարկի վտանգների արդյունավետ կանխարգելման միջոց:

**գ.** Այն պետք է խրախուսի պատշաճ վարքագիծը թափոնների կանխարգելման գործում՝ կիրառելով հրաժարվի՛ր-վերաօգտագործի՛ր-վերամշակի՛ր սկզբունքները, այդ թվում օգտվի կենցաղային թափոնների պատշաճ հեռացման համար առկա լուծումներից և ենթակառուցվածքներից:

2. Որպես մրցույթի հայտ կարող են ներկայացվել հետևյալ տեսակի աշխատանքներ.

**ա.** Ուսումնական և/կամ փաստագրական զեկույց (կրթական ծրագիր և/կամ նյութ, վերլուծություն,

**§2 Subject of competition**

1. During the Competition the best creative educational-creative works (hereafter as "Competition Entry") will be selected. The Competition Entry should present at least one of the following thematic features:

a. It shall draw attention to a particular problem with household waste present in the city, district, or neighborhood and highlight the associated risks.

b. It shall present an idea for a solution to a particular problem related to household waste or propose a way of effective prevention of the associated dangers.

c. It shall promote and enhance proper behaviours in waste prevention, such as refuse, reuse, and segregation/recycling, including the use of solutions and infrastructure for proper household waste disposal which are available locally.

2. The following types of works may be submitted as a Competition Entry:

a. Educational and/or documentary elaboration (educational programme and/or material, an analysis, a presentation, a situational report, an issue report, etc.),

պրեզենտացիա, առկա իրավիճակի վերաբերյալ զեկույց, հիմնախնդր մասին զեկույց և այլն),

**բ.** Ստեղծագործական նախագիծ կամ գաղափար թափոնների կառավարման համակարգի կատարելագործման համար (օրինակ՝ քաղաքային թափոնների կառավարման համակարգում նոր գործառույթ, նոր սարք կամ սարքավորում, որը կկառուցվի կամ կտեղադրվի, հաղորդակցության նոր եղանակ կամ իրազեկման արշավի պլան, զեկույց իրականացված տեղեկատվական/իրազեկման արշավի վերաբերյալ և այլն),

**գ.** Ստեղծագործական, գեղարվեստական աշխատանք կրթական կամ իրազեկման ասպեկտներով (օրինակ՝ ինֆոգրաֆիկա, պաստառ կամ թվային արտադրանք, որը տեղեկացնում է քաղաքացիներին, թե ինչպես ճիշտ վարվել կենցաղային աղբի հետ և ինչու է դա կարևոր և այլն):

Մրցույթի հայտը կարող է նաև համատեղել վերը թվարկված աշխատանքների տարբեր ասպեկտներ (օրինակ՝ իրազեկման արշավի մանրամասն պլան և արվեստի գործեր, որոնք կօգտագործվեն այդ արշավում), կամ 1-ին կետում թվարկված թեմատիկ պահանջները կարող են այլ կերպ իրականացվել:

3. Մրցույթի հայտը կարող է պատրաստվել հետևյալ ձևերից մեկով (կամ նմանատիպ).

**ա.** Ուսումնական զեկույց/նյութ՝ հոդված, նյութ (գրավոր, ֆոտոլրագրողական, աուդիո կամ վիդեո ձայնագրություններով), կոմիքսներ, ինֆոգրաֆիկա, ուսումնական թղթապանակ և այլն,

**բ.** Ստեղծագործական նախագիծ կամ գաղափար՝ տեսասահիկներ, նկարազարդում, թվային կամ ֆիզիկական 3D մոդել, մակետ և այլն,

**գ.** Ստեղծագործական, գեղարվեստական աշխատանք կրթական և իրազեկման ասպեկտներով՝ պաստառ (պլակատների շարք), անիմացիա, թվային արվեստ (նկարների շարք), ինֆոգրաֆիկա, կոմիքսներ, տեսահոլովակ, ներկայացում (սցենարով բեմադրված, որը աշակերտները կխաղան կամ ներկայացման տեսագրություն), կոլաժ և այլն:

Կազմակերպիչը հայտարարում է, որ բաց է այլ հնարավոր ձևերի նկատմամբ և խրախուսում է հեղինակներին հարմարեցնել ֆորմալ առանձնահատկություններն իրենց գաղափարներին և կարիքներին:

4. Մրցույթի հայտը պետք է համապատասխանի թեմատիկ պահանջներին (ինչպես սահմանված է վերը նշված 1-ին կետում), ինչպես նաև բավարարի տեխնիկական պայմանները և համապատասխանի §3 (Մասնակցության պայմանները և տարիքային խմբերը) և §4 (Գնահատման չափանիշները, միավորները և ֆորմալ պահանջները) կետերով սահմանված չափանիշներին:

5. Մրցույթի հայտը կարող է ներկայացվել.

b. Creative project or idea for waste management system enhancement (e.g. a new functionality in the municipal waste management system, a new device or appliance to be constructed or installed, a new way of communication or a plan for an awareness campaign, a report on an implemented campaign, etc.),

c. Creative, artistic work with educational or awareness aspects (e.g. an infographic, a poster, or a digital production informing citizens how to properly deal with household waste and why this is important, etc.).

A Competition Entry may also combine various aspects of the works listed above (e.g. a detailed plan of a communication campaign including artworks to be used in such campaign) or fulfil the thematic requirements listed in point 1 above differently.

3. The Competition Entry may be prepared in one of the following forms (or similar):

a. Educational elaboration or feature: article, feature (written, photojournalistic, audio or video records), comic strip, infographic, educational folder, etc.;

b. Creative project or idea: slideshow, illustrated description, digital or physical 3D model, mock-up, etc.;

c. Creative, artistic work with educational and awareness aspects: poster (series of posters), animation, digital artwork (series of artworks), infographic, comic strip, video, performance (a script to be performed or a video recording of an actual performance), collage, etc.

The Organiser declares openness to other possible forms and encourages authors to adjust formal features to their ideas and needs.

4. The Competition Entry should be in line with the thematic requirements (as set in point 1 above), as well as fulfil technical conditions and meet the criteria determined by §3 (Terms and conditions of participation and age groups) and §4 (Assessment criteria, scoring and formal requirements).

5. The Competition Entry can be delivered:

ա) թվային ֆորմատով՝ որպես համակարգչային ֆայլ՝ §4(2)-ում թվարկված կետերից մեկով: Թվային ֆայլերը պետք է կցվեն էլ. փոստին կամ, եթե ֆայլի չափը գերազանցում է էլ. փոստի հաղորդակցման սահմանները, վերբեռնվեն ամպի կամ վիրտուալ սկավառակի վրա, որպեսզի Կազմակերպիչին ուղարկվի ուղղակի հղում, որը հնարավորություն կտա ներբեռնել ֆայլը: Էլեկտրոնային նամակը՝ մրցույթի հայտով կամ համապատասխան հղումով, պետք է ներառի նաև մրցույթի հայտի անվանումը, հայտը ներկայացնող դպրոցի անվանումը և համարը (ցանկալի է), ԿԱՄ անհրաժեշտության դեպքում
բ) Կազմակերպիչին ուղարկվի որպես ֆիզիկական առարկա (գեղանկարի կամ գրաֆիկայի օրիգինալ, տպագիր տեքստ կամ նկարներ և այլն) աշխատանքային օրերին (երկուշաբթի-ուրբաթ, ժամը՝ 10:30 - 15:00) հետևյալ հասցեով՝ Տերյան 44. , Երևան, Հայաստան՝ Կարեն Հարությունյանի հետ +374 91 346 005 հեռախոսահամարով նախնական պայմանավորվածություն ձեռք բերելով:

a) in a digital form, as a computer file with one of the extensions listed in §4(2). Digital files shall be attached to an e-mail or, if the file size is above the limits of e-mail communication, uploaded to a cloud or virtual disc so that a direct link enabling file download can be sent to the Organiser. The e-mail with the Competition Entry attached or with the proper link shall also include the title of the Competition Entry, the name and the number of the school submitting the entry (preferably), OR if necessary
b) as a physical object (original painting or graphic, printed text or pictures, etc.), to the following address of the Organiser on work days (Monday- Friday 10:30-15:00) at 44 Teryan str., Yerevan, Armenia with preliminary agreement with Karen Harutyunyan via phone +374 91 34 60 05.

### §3 Մասնակցության պայմանները և տարիքային խմբերը

1. Մրցույթը նախատեսված է Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող **տարրական, հիմնական և միջնակարգ** դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար:
2. Մրցույթին մասնակցությունը կամավոր է և անվճար: Մասնակցությունը Կազմակերպիչից որևէ ձևով կամ չափով վարձատրություն ստանալու իրավունք չի տալիս:
3. Մրցույթը միայն թիմերի համար է: Աշակերտների յուրաքանչյուր գրանցված թիմ (այսուհետ՝ «Թիմ») ներկայացնում է իրեն և նշում դպրոցը, որտեղ սովորում են աշակերտները: Հաղթողները կընտրվեն մասնակից Թիմերից և համապատասխան դպրոցներից (այսուհետ՝ «Մասնակիցներ»):
4. Մրցույթն անցկացվում է չորս դպրոցական մակարդակներում և տարիքային խմբերում.
ա. Խումբ I՝ տարրական դպրոցներ, 1-3 դասարաններ (7-9 տարիքային խմբեր),
բ. Խումբ II՝ հիմնական դպրոցներ, 4-6 դասարաններ (10-12 տարիքային խմբեր),
գ. Խումբ III՝ հիմնական դպրոցներ, 7-9 դասարաններ (13-14 տարիքային խմբեր),
դ. Խումբ IV՝ միջնակարգ դպրոցներ, 9-10 դասարաններ (15-16 տարիքային խմբեր):
5. Յուրաքանչյուր թիմ պետք է բաղկացած լինի **երեք անդամից**, ովքեր հանդիսանում են նույն դպրոցի աշակերտներ և համապատասխանում են նույն խմբին (վերը նշված 4 կետերով սահմանված կարգերից մեկը), **և մենթորից** (այսուհետ՝

### §3 Terms and conditions of participation and age groups

1. The Competition is addressed to the **public, primary and secondary schools** located within the boundaries of the Yerevan Municipality and to students and teachers of these schools.
2. Participation in the Competition is voluntary and free of charge. Participation does not entitle to remuneration from the Organiser in any form or amount.
3. The Competition is dedicated to teams only. Every signed-up team of students (hereafter as “the Team”) represents themselves and indicates the school the students attend. The winners will be selected from among the Teams and from the respective schools (hereafter called jointly as “the Participants”).
4. The Competition runs in four school levels and age groups:
a. Group I: elementary schools, grades 1-3 (age groups 7-9);
b. Group II: basic schools, grades 4-6 (age groups 10-12);
c. Group III: basic schools, grades 7-9 (age groups 13-14);
d. Group IV: senior secondary schools, grades 9-10, age groups 15-16.
5. Every team should consist of **three members**, being students of the same school and belonging to the same group (one of the categories defined under point 4 above), **and a mentor** (hereafter “the Mentor”), being a teacher employed in the same school the Team represents.

«Մենթոր»)՝ ուսուցիչ, ով աշխատում է նույն դպրոցում, որը ներկայացնում է թիմը:

6. Մենթորի դերը հետևյալն է.
ա. օգնել թիմին հասկանալ Մրցույթի թեման և կանոնները, ինչպես նաև դպրոցի տնօրենի հետ համատեղ պատրաստել մրցույթի պաշտոնական հայտը,
բ. աջակցել թիմին առաջադրանքների արդյունավետ բաժանման, աշխատանքի պլանավորման և տեխնիկական պահանջների կատարման գործում: Անհրաժեշտության դեպքում Մենթորը պետք է նաև օգնի թիմին խմբային աշխատանքի համար հարմար սենյակ գտնելու հարցում և նման աշխատանքի ընթացքում հոգ տանի Թիմի մասին,
գ. օգնել թիմին գտնել տեղեկատվության և գիտելիքի հուսալի աղբյուրներ,
դ. վերահսկել բովանդակության ստեղծումը մրցույթի մասնակցության համար՝ համոզվելու համար, որ այն ճիշտ է և իմաստալից,
ե. ոգեշնչել և մոտիվացնել թիմին աշխատել հնարավորինս ինքնուրույն և արդյունավետ:

7. Յուրաքանչյուր թիմ կարող է ներկայացնել միայն մեկ մրցութային հայտ և միայն մեկ տարիքային խմբում:

8. Յուրաքանչյուր աշակերտ կարող է լինել միայն մեկ թիմի անդամ:

9. Ուսուցիչը կարող է լինել մեկից ավելի Թիմերի (բայց ոչ ավելի, քան երկու Թիմերի) մենթոր, նաև այն դեպքում, երբ թիմերը մրցում են տարբեր տարիքային խմբերում, ինչպես նաև ներկայացնում են տարբեր դպրոցներ, պայմանով, որ Ուսուցիչը աշխատի այդ դպրոցներից յուրաքանչյուրում:

10. Թիմը և նրա ստեղծած մրցութային հայտը ներկայացնում է համապատասխան դպրոցի տնօրենը (այսուհետ՝ «Դիմորդ»): Այդ նպատակով Դիմորդը պետք է լրացնի և ուղարկի Դիմումի ձևը Կազմակերպիչին, ինչպես նաև Դիմորդի համաձայնությունը. երկու փաստաթղթերն էլ ներկայացված են սույն Կանոնադրության Հավելված 1-ում:

11. Դիմորդին թույլատրվում է տարբեր տարիքային խմբերում ներկայացնել մի քանի մրցույթի հայտ, բայց ոչ ավելի, քան երեք հայտ մեկ տարիքային խմբի համար: Յուրաքանչյուր մրցութային հայտ պետք է ներկայացվի առանձին Հայտի ձևով՝ կցված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով (ստորագրված բնօրինակների պատճենները բավարար են):

12. Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցները (Թիմի անդամները և թիմի մենթորները) պետք է ստորագրեն համաձայնություն սույն Կանոնադրության բոլոր դրույթների վերաբերյալ, ներառյալ այն դրույթները, որոնք վերաբերում են հեղինակային իրավունքը Կազմակերպիչին փոխանցելուն, ինչպես սահմանված

6. The role of the Mentor is to, above all:
a. help the Team understand the subject and rules of the Competition, as well as, in cooperation with the school principal, prepare the formal application to the Competition;
b. support the Team in effective task division, work planning and fulfilment of the technical requirements. When needed, the Mentor should also help the Team in finding a room suitable for group work and look after the Team during such work;
c. help the Team find reliable sources of information and knowledge;
d. supervise content creation for the Competition Entry to make sure it is correct and substantive;
e. inspire and motivate the Team to work in a self-sufficient way.

7. Every Team can submit only one Competition Entry and within a single age group only.

8. Every student can be a member of one Team only.

9. The Teacher can be a mentor to more than one Team (but not more than two Teams), also in case of Teams competing in different age groups as well as representing different schools, provided the Teacher is employed in every one of those schools.

10. The Team and the Competition Entry it has created are submitted by the principal of the respective school (hereafter as “the Submitter”). For this purpose the Submitter should fill in and send the Application Form to the Organiser, along with the Consent of the Submitter – both documents constitute Annex 1 to this Statute.

11. The Submitter is allowed to submit multiple Competition Entries in different age groups, but no more than three entries to a single Age group. Every Competition Every entry must be submitted on a separate Application form with all required documents attached (copies of signed originals are sufficient).

12. To participate in the Competition, the Participants (Team Members and Team Mentors) need to sign a consent to all the provisions of this Statute, including those regarding the transfer of the copyright to the Organiser as determined in §8 Copyright and other provisions, as well as the declaration of having read the

է §8-ում՝ Հեղինակային իրավունքը և այլ դրույթներ, ինչպես նաև անձնական տվյալների մշակման վերաբերյալ տեղեկատվությունը կարդալու մասին հայտարարությունը: Այդ նպատակով.

ա. Անչափահաս մասնակցի ծնողը կամ օրինական խնամակալը պետք է լրացնի և ստորագրի Մրցույթին մասնակցելու համաձայնությունը և անչափահաս մասնակցի ծնողի/օրինական խնամակալի հայտարարությունը. երկու փաստաթղթերն էլ ներկայացված են Կանոնադրության Հավելված 2-ում:

բ. Յուրաքանչյուր չափահաս մասնակից (Թիմի մենթոր) պետք է լրացնի Մրցույթին մասնակցելու համաձայնությունը և մասնակցի հայտարարությունը. երկու փաստաթղթերն էլ ներկայացված են Կանոնադրության Հավելված 2-ում:

information regarding personal data processing. For this purpose:

a. A Parent or Legal Guardian of a minor participant shall fill in and sign the Consent for Participation in the Competition and the Declaration of a Parent/Legal Guardian of a minor Participant – both documents constitute Annex 2 to the Statute.

b. Every adult participant (Team Mentor) shall fill in Consent for Participation in the Competition and the Declaration of a Participant – both documents constitute Annex 2 to the Statute.

13. Անձնական տվյալների մշակման համաձայնությունը և Կանոնադրության ընդունումը (ներառյալ հեղինակային իրավունքի փոխանցումը Կազմակերպիչին, ինչպես սահմանված է §8 Հեղինակային իրավունքի և այլ դրույթներով) կամավոր են, բայց անհրաժեշտ են Մրցույթին մասնակցելու համար:

13. Consent to personal data processing and acceptance of the Statute (including copyright transfer to the Organiser, as determined in §8 Copyright and other provisions) are voluntary but necessary to participate in the Competition.

Ստորագրված հայտը (բնօրինակը) պետք է պահպանվի Դիմորդի մոտ, մինչդեռ բոլոր պահանջվող փաստաթղթերի պատճենները (սկաներ, PDF ֆայլեր) պետք է էլեկտրոնային եղանակով ուղարկվեն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ hwmproject.2020@gmail.com **թեմայի դաշտում նշելով՝ «Դպրոցական մրցույթ. 3R սկզբունքներ»**

The Signed Application (the original) shall be retained by the Submitter while copies of all required documents (scans, PDFs) shall be delivered electronically to this email address: hwmproject.2020@gmail.com **with the subject: "School Competition: 3R principles"**

## §4 Գնահատման չափանիշները, միավորները և ֆորմալ պահանջները

1. Մրցույթի հայտերը գնահատվում են հետևյալ չափանիշների հիման վրա.

ա. Բովանդակության համապատասխանությունը մրցույթի նպատակներին՝ 0-25 միավոր, այդ թվում՝
  i. Թեմայի ընտրությունը և լուսաբանումը՝ 0–10 միավոր,
  ii. Ներկայացված տեղեկատվության շրջանակը և ճշգրտությունը՝ 0–10 միավոր,
  iii. Հղումների, օգտագործված աղբյուրների բազմազանությունը՝ 0–5 միավոր,

բ. Փաստագրական, նորարարական, համոզիչ ասպեկտներ՝ 0–30 միավոր, այդ թվում՝
  iv. Փաստագրական արժեքը, եթե հայտն ունի նման հատկանիշներ՝ 0–10 միավոր,
  v. Առաջարկված լուծման կրեատիվությունը, եթե հայտն ունի այդպիսի հատկանիշներ՝ 0–10 միավոր,
  vi. Համոզիչ լինելը և իրազեկության բարձրացման ներուժը, եթե հայտն ունի այդպիսի հատկանիշներ՝ 0–10 միավոր:

## §4 Assessment criteria, scoring and formal requirements

1. Competition Entries shall be assessed based on the following criteria:

a. Content compliance with the Competition goals: 0-25 points, including
  i. Topic selection and coverage: 0–10 points;
  ii. Scope and correctness of information included: 0–10 points;
  iii. Variety of the information sources referred to: 0–5 points;

b. Documentary, innovative persuasive aspects: 0–30 points, including:
  i. Documentary value – if the entry has such features: 0–10 points,
  ii. Creativity of the solution presented – if the entry has such features: 0–10 points,
  iii. Persuasiveness and awareness-raising potential – if the entry has such features: 0–10 points.

գ. Թեմայի և հիմնական ուղերձների ներկայացման կրեատիվությունը՝ 0–15 միավոր:
դ. Աշխատանքի ճշտակատարությունը և որակը՝ 0–15 միավոր:
ե. Բովանդակության համապատասխանությունը տեղական թափոնների կանխարգելման ընթացիկ մարտահրավերներին, թափոնների կառավարման համակարգին և դրա կատարելագործմանը՝ 0–15 միավոր:
Առավելագույն գնահատականը՝ 100 միավոր:

2. Մրցույթի հայտի ֆայլերի ընդունելի ֆորմատը և առավելագույն չափը (ծավալը) հետևյալն են.
**ա.** Տեքստերի և նկարներով տեքստերի համար՝ առավելագույնը 12,000 նիշ (ներառյալ բացատները) և 10 արվեստի գործեր/նկարներ. ամբողջ փաստաթուղթը պետք է տեղավորվի A4 չափսի առավելագույնը 10 էջի վրա՝ տպագիր կամ համակարգչային ֆայլում: Ֆայլի ընդունելի ձևաչափերն են՝ .DOC, .DOCX, .RTF, .PDF,
**բ.** Սահիկների ցուցադրման համար՝ առավելագույնը 10 սահիկ՝ 16:9 չափի, տպագիր կամ թվային ֆայլում: Ֆայլի ընդունելի ձևաչափերն են՝ .PDF, .PPT, .PPTX,
**գ.** Թղթի վրա գրաֆիկայի համար՝ առավելագույնը 5 թերթ A4 չափս-ի դեպքում, առավելագույնը 3 թերթ A3 չափս-ի դեպքում և առավելագույնը 1 թերթ A1 չափս-ի դեպքում: Էջի դիրքը կարող է լինել ուղղահայաց կամ հորիզոնական; մի քանի թերթերի դեպքում թույլատրվում են էջի տարբեր դիրքեր: Էջի տրված չափը առավելագույնն է, ավելի փոքր չափերը թույլատրվում են:
**դ.** Համակարգչային ֆայլերում գրաֆիկայի համար՝ առավելագույնը համապատասխանող լուծաչափի մինչև 5 էջ/էկրան A4 չափս-ի դեպքում, առավելագույնը համապատասխանող լուծաչափի մինչև 3 էջ/էկրան A3 չափս-ի դեպքում, կամ առավելագույնը համապատասխանող լուծաչափի մինչև 1 էջ/էկրան A1 չափս-ի դեպքում: Էջի դիրքը կարող է լինել ուղղահայաց կամ հորիզոնական; մի քանի էջերի/էկրանների համար թույլատրվում է էջերի տարբեր դիրքեր: Տվյալ էջի/էկրանի սահմանաչափի լուծաչափը առավելագույնն է, ավելի փոքր չափերը թույլատրվում են: Ֆայլի ընդունելի ձևաչափերն են՝ .GIF, .JPG, .JPEG, .PDF, .PNG,
**ե.** Աուդիո և վիդեո ձայնագրություններ, անիմացիաներ՝ մինչև 5 րոպե ձայնագրման ընդհանուր տևողությամբ, որոնք կարող են բաժանվել առավելագույնը 5 առանձին մասերի (օրինակ՝ աուդիո ձայնագրություններ, կարճ տեսանյութեր կամ անիմացիաներ): Ֆայլի ընդունելի ձևաչափերն են՝ .3GP, .AVI, .AVIF, .ASF, .GIF, .MOV, .MP4, .MPEG, .MPG, .WEPG, .WMA, .WMV , տեսանյութի համար՝ .WAV, .MP3, .M4A, .AAC, .ADT, .ADTS,

c. Creativity of the presentation of the topic and key messages: 0–15 points.
d. Work diligence and quality: 0–15 points.
e. Content relevance to the current local waste prevention challenges, waste management system, and its improvement: 0–15 points.

Maximum score: 100 points.

2. The acceptable file formats and the maximal size (volume) of the Competition Entry are:
a. For texts and texts with pictures – up to a maximum of 12,000 characters (including spaces) and of 10 artwork pieces/pictures; the whole paper should fit up to a maximum of 10 pages of A4 size, in print or computer file. Acceptable file formats: .DOC, .DOCX, .RTF, .PDF;
b. For slideshow – up to a maximum of 10 slides of 16:9 size, in print or in a digital file. Acceptable file formats: .PDF, .PPT, .PPTX;
c. For graphics on paper – up to 5 sheets of max. A4 size or up to 3 sheets of max. A3 size or one sheet of max. A1 size. The orientation can be vertical or horizontal; for multiple sheets, a mixed orientation is allowed. The size for a given sheet limit is the maximum, smaller sizes are allowed.
d. For graphics in computer files – up to 5 pages/screens of a resolution corresponding to max. A4 size or up to 3 pages/screens of a resolution corresponding to max. A3 size or one sheet of a resolution corresponding to max. A1 size. The orientation can be vertical or horizontal; for multiple pages/screens mixed orientation is allowed. Resolution within a given page/screen limit is the maximum, smaller sizes are allowed. Acceptable file formats: .GIF, .JPG, .JPEG, .PDF, .PNG;
e. Audio and video recordings, animations – up to 5 minutes of a total recording time, which might be split into a maximum of 5 separate parts (e.g. audio recordings, short videos or animations). Acceptable file formats: .3GP, .AVI, .AVIF, .ASF, .GIF, .MOV, .MP4, .MPEG, .MPG, .WEPG, .WMA, .WMV – for video; .WAV, .MP3, .M4A, .AAC, .ADT, .ADTS.
f. Physical or digital models, mock-ups, installations – with solid construction and made out of damage-resistant materials,  preferably recyclable, maximum size of 40 cm x 40 cm x 40 cm, or 100 MB for digital files. Acceptable file formats: .OBJ, .3DS, .STL, .PLY, .GLTF, .3DM, .FBX.

**գ.** Ֆիզիկական կամ թվային մոդելներ, մակետներ, ինստալացիաներ՝ ամուր կառուցվածքով և պատրաստված դիմացկուն նյութերից, գերադասելի է վերամշակման ենթակա, առավելագույն չափը 40 սմ x 40 սմ x 40 սմ կամ 100 ՄԲ թվային ֆայլերի համար: Ֆայլի ընդունելի ձևաչափերն են՝ .OBJ, .3DS, .STL, .PLY, .GLTF, .3DM, .FBX:

3. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Դիմորդի կողմից ուղարկված ֆայլը որևէ տեխնիկական պատճառով ներբեռնել հնարավարոր չլինելու կամ չբացելու դեպքում: Հայտնաբերելով նման խնդիր՝ Կազմակերպիչը ջանքեր կգործադրի շուտափույթ տեղեկացնել Դիմորդին, որպեսզի Դիմորդը և Թիմը կարողանան շտկել իրավիճակը: Նման դեպքում Կազմակերպիչը կարող է խնդրել Դիմորդին ուղարկել ֆայլը այլ ձևաչափով կամ այլ թվային եղանակով: Եթե Դիմորդը չի արձագանքում նման ծանուցմանը կամ խնդրանքին, կամ եթե խնդիրը շարունակում է գոյություն ունենալ, չնայած այն լուծելու փորձերին, վերջնաժամկետի ավարտից հետո Կազմակերպիչը կարող է չընդունել մրցույթի հայտը:

3. The Organiser has no liability in case of failure to download or to open a file sent by the Submitter due to technical reasons of any kind. Having detected such a problem, the Organiser will make an effort to notify the Submitter soon enough to make it possible for the Submitter and the Team to fix the situation. In such case, the Organiser may request the Submitter to send a file in another format or through another digital channel. If the Submitter does not respond to such notice or request or if the problem continues to exist, despite the attempts to solve it, when the deadline has passed, the Organiser may not accept the Entry to the Competition.

4. Մրցույթի հայտը կարող է ստեղծվել նաև այլ ձևաչափով/ֆայլով, քան վերը նշված է, սակայն նման դեպքերում պահանջվում է տեխնիկական հարցերով խորհրդակցել Կազմակերպիչի հետ՝ հաստատելու համար, որ հնարավոր կլինի հանձնել հայտը, իսկ Կազմակերպիչը կկարողանա պատշաճ կերպով վարվել վերջինիս հետ՝ պայմանավորված նյութատեխնիկական, կազմակերպչական և տեխնիկական պայմաններով: Այս հարցով կոնտակտային անձը Կազմակերպիչի ներկայացուցիչն է, որը նշված է §8(10) կետում: Առանց խորհրդակցության և հաստատման, մրցույթի նման հայտը կարող է մերժվել:

4. The Competition Entry may also be created in other form/file format than mentioned above, but in such cases, it is required to consult technical matters with the Organiser to confirm that it would be possible to deliver the Entry and for the Organiser to handle it properly, regarding logistic, organizational and technical conditions. The contact person for this matter is the representative of the Organiser indicated in §8(10). Without consultation and confirmation, such Competition Entry may be rejected.

5. Մրցութային հայտերը, որոնք գերազանցում են ծավալի կամ չափի սահմանները, ներառյալ թվային ֆայլերի չափերը, կարող են մերժվել:

5. Competition Entries that exceed the limits of volume or size, including the size of digital files, may be rejected.

6. Մրցույթի հայտի մեջ առկա խնդիրները կամ վտանգները (օրինակ՝ անտառ նետված վտանգավոր թափոնները) պարտադիր չէ, որ հիմնված լինեն փաստացի դեպքերի վրա (օրինակ՝ որոշակի վայրում թափված վտանգավոր թափոններ), սակայն փաստացի դեպքերը կդիտարկվեն որպես առավելություն: Այնուամենայնիվ, բոլոր պաշտպանական միջոցները պետք է կիրառվեն՝ խուսափելու համար աշակերտների և այլ անձանց շփումից վտանգավոր նյութերի հետ:

